VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Չափորոշիչ ա. ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

Վերլուծենք մասնաճյուղում առկա հետազոտական ոլորտում հետաքրքրությունների և հավակնությունների ռազմավարության արդյունավետությունը վերջին 3 տարիների համար և արդիականությունը:

Հետազոտական ոլորտում մասնաճյուղի հետաքրքրություններն ու հավակնություններն ամրագրված են ԵՊՀ ԻՄ Գիտական խորհրդի 2011թ. փետրվարի 24-ի նիստում ընդունված «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի զարգացման ռազմավարական ծրագիր (2011-2015թթ.)» փաստաթղթում: Համաձայն դրա մասնաճյուղը գիտական հետազոտությունների և նորարարության ոլորտում նպատակ ունի «*Մեծացնել գիտական ներուժի ներդրումը տարածաշրջանի տնտեսական զարգացման և հասարակության բարեկեցության բարձրացման գործում, խրախուսել դասախոսական կազմի ակտիվ ներգրավումը հետազոտական աշխատանքներում*»: Նպատակի իրականացման համար կրթօջախն իր գործունեությունը նպատակաուղղել է առաջադրված մեկ խնդրի լուծմանը.

1. ստեղծել նախադրյալներ և նպաստող մեխանիզմներ՝ հետազոտությունների ծավալի աճի և հետազոտական նախագծերում դասախոսական կազմի և ուսանողների ներգրավվածության ընդլայնման համար:

Առկա մասնագիտությունների հետազոտական գործունեությամբ (ամբիոնների գիտական ուղղությունները՝ *Հավելված 6.1*), պահպանելով ԵՊՀ-ում տարիների ընթացքում ձևավորված հետազոտական դպրոցների ավանդույթները և նպաստելով դրանց զարգացմանը, կրթօջախը ձգտում է նպաստել հայագիտական, հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական, բնական գիտությունների և մշակույթի զարգացմանն ու նորովի մատուցմանը տարածաշրջանում («Առաքելությունը և զարգացման ռազմավարական նպատակները»): Մասնագիտական ամբիոններում հետազոտական աշխատանքները կազմակերպվում են ըստ ռազմավարական ծրագրի, արտահայտվում ամբիոնների աշխատանքային պլաններում և կարգավորվում «Ամբիոնների գործունեության կանոնակարգ»-ով: Պրոֆեսորադասախոսական կազմի կողմից ղեկավարվող գիտահետազոտական աշխատանքները կազմակերպվում և իրականացվում են ԵՊՀ ԻՄ-ի Գիտական խորհրդի 2014թ. հունվարի 27-ի նիստում հաստատված «Պրակտիկաների կազմակերպման և անցկացման կարգ»-ի, ինչպես նաև 2012թ. փետրվարի 28-ի նիստում հաստատված «Բակալավրի կրթական ծրագրով կուրսային աշխատանքի կատարման և գնահատման կարգ»-ի և «Բակալավրի կրթական ծրագրով ավարտական աշխատանքների գրախոսման կարգ»-ի համաձայն:

Գիտահետազոտական աշխատանքների արդյունքները մասնագիտական լայն հասարակությանն են ներկայացվում առանձին հոդվածների, գիտական ժողովածուների, պարբերականների, գրքերի ու ինֆորմացիայի տարածման այլ միջոցներով, ներկայացվում ներբուհական, հանրապետական և միջազգային գիտահետազոտական միջոցառումներում. գիտաժողովներ, նստաշրջաններ, սեմինարներ:

2012-2015թթ. ընթացքում ԵՊՀ ԻՄ-ի դասախոսական կազմի գիտահետազոտական աշխատանքներում ավելացել են հրատարակված հոդվածների, մենագրությունների, ուսումնական ձեռնարկների քանակը (***Աղյուսակ 1***):

Աղյուսակ 1.

Դասախոսական կազմի գիտահետազոտական աշխատանքների հրատարակություններն ըստ ուստարիների					
N	Հրատարակություն	2012-2013	2013-2014	2014-2015	**Ընդամենը**
1	Հոդված	91	81	113	285
2	Մենագրություն	3	4	6	13
3	Դասագիրք	0	0	2	2
4	Ուսումնական ձեռնարկ	1	3	1	5
5	Ուսումնամեթոդական ձեռնարկ	7	5	14	26
6	Զեկուցումների թեզիսներ	7	11	0	18
Ընդամենը		***109***	***104***	***136***	***349***

Զգալի են հատկապես հայագիտական և հումանիտար գիտությունների գծով կատարված ուսումնասիրությունները (***Աղյուսակ 2***):

Աղյուսակ 2

Գիտահետազոտական աշխատանքների հրատարակությունները ըստ ամբիոնների									
N	Ամբիոն	2012-2013		2013-2014		2014-2015		**Ընդամենը**	
		հոդված	ուսումնա-գիտ	հոդված	ուսումնա-գիտ	հոդված	ուսումնա-գիտ	հոդված	ուսումնա-գիտ
1	Ընդհանուր ֆիզիկա	7	0	1	0	Ամբիոնների փոփոխ.		**8**	**0**
2	Բարձրագույն մաթեմատիկա և ինֆորմատիկա	6	0	7	1			**13**	**1**
3	Անտառագիտություն	6	1	8	1			**14**	**2**
4	Հայոց պատմություն և հասարակագիտություն	17	2	12	2	13	4	**42**	**8**
5	Հայոց լեզու և գրականություն	15	5	13	1	25	7	**53**	**13**
6	Մանկավարժություն և հոգեբանություն	12	2	20	3	33	0	**65**	**5**
7	Օտար լեզուների	16	0	15	2	13	5	**44**	**7**
8	Ընդհանուր տնտեսագիտության	15	0	8	2	8	2	**31**	**4**
9	Տուրիզմի կառավարում և մշակութաբանություն	6	1	9	0	10	5	**25**	**6**
Ընդամենը՝		***90***	***11***	***93***	***12***	***102***	***23***	***295***	***46***
10	Դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի (աշխ. մասն. ցուցահանդեսների)	**11**		**7**		**14**		**32**	
11	Գծանկարի, գունանկարի և քանդակի (աշխ. մասն. ցուցահանդեսների)	**11**		**7**		**29**		**47**	
Ընդամենը՝		***22***		***14***		***43***		***79***	

* Ուսումնագիտականի հրապարակումների տակ նկատի են առնված հրատարակված դասագրքերը, մենագրություն-ները, ուսումնական ձեռնարկները, ուսումնամեթոդականները:

Ակտիվացել են ԵՊՀ ԻՄ-ի դասախոսական կազմի մասնակցությունները ՀՀ-ում և արտերկրում կազմակերպվող գիտաժողովներին (տես ***աղյուսակ 3, աղյուսակ 7***):

Աղյուսակ 3

Դասախոսական կազմի մասնակցությունը ՀՀ-ում և արտերկրում կազմակերպվող գիտաժողովներին					
N	Կազմակերպման վայրը	2012	2013	2014	**Ընդամենը**
1	Ներբուհական գիտաժողովներ	1	5	3	***9***
2	Հանրապետական գիտաժողովներ	5	8	9	***22***
3	Միջազգային գիտաժողովներ	8	9	9	***26***
Ընդամենը		***14***	***22***	***21***	***57***

2012-2015թթ. ընթացքում թեկնածուի գիտական ատենախոսություն են պաշտպանել մասնաճյուղի 24 դասախոսներ (15-ը՝ հումանիտար գիտությունների բնագավառում, 6-ը՝ բնական գիտությունների, 2-ը՝ տնտեսագիտության, 1-ը՝ արվեստագիտության): Գիտական աստիճան են ստացել 21-ը (9-ը՝ արտաքին համատեղությամբ աշխատող դասախոսներ, 12-ը՝ հիմնական: Նրանցից 7-ը մասնաճյուղի նախկին շրջանավարտներ են, ևս երեք ԵՊՀ ԻՄ շրջանավարտ դասախոսներ պատրաստվում են ատենախոսական պաշտպանության մինչև 2015թ. ավարտը: Դոկտորի գիտական ատենախոսություն պաշտպանել են ԵՊՀ ԻՄ-ում համատեղության սկզբունքով աշխատող երկու դասախոսներ, դոկտորի գիտական աստիճան շնորհվել է նրանցից դեռևս մեկին (տնտ.գիտ.դոկ.):

Գիտահետազոտական աշխատանքներում կարևորվել են տարածաշրջանի խնդիրներին նվիրված թեմաները: 2011թ. մասնաճյուղի կողմից կազմակերպվել և իրականացվել է «Տավուշի մարզի հիմնախնդիրների զարգացման հեռանկարները» թեմայով գիտաժողով, 2014թ. «Հայաստանի հյուսիս-արևելյան տարածաշրջանի կենսաբազմազանության պահպանության հիմնախնդիրները» խորագրով գիտական սեմինար, 2014թ. մասնաճյուղում իրականացվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի կողմից հրատարակված «Տավուշ: Սոցիալ-մշակութային գործընթացներ (Ավանդույթ և արդիականություն)» գրքի շնորհանդեսը, իսկ 2015թ. «ՀՀ սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները» թեմայով միջբուհական հանրապետական գիտաժողով: Մասնագիտական առանձնահատկությունից ելնելով մասնաճյուղի որոշ ամբիոններում ավարտական աշխատանքների մի մասը նվիրվել են տարածաշրջանի խնդիրներին: Օրինակ՝ վերջին երեք տարիների կտրվածքով «Անտառագիտություն» ամբիոնի դասախոսների կողմից ղեկավարված 113 ավարտական թեմաներից (առկա և հեռակա) 67-ը նվիրված են եղել Տավուշի մարզին, «Տուրիզմի կառավարում և մշակութաբանություն» ամբիոնում ղեկավարված 59 ավարտական թեմաներից (առկա) 24-ը նվիրվել են տարածաշրջանին: Նշված ամբիոնների դասախոսների կողմից պաշտպանության ներկայացված ատենախոսական երկու թեմաները ևս վերաբերել են Տավուշի մարզի ուսումնասիրությանը (տես՝ ***Հավելված 2***):

Չափորոշիչ բ. ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

Վերլուծենք մասնաճյուղում առկա հետազոտական ոլորտում հետաքրքրությունների և հավակնությունների միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրերի իրականացման արդյունավետությունը վերջին 3 տարիների համար և արդիականությունը:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում գիտահետազոտական հետաքրքրություններն ու հավակնությունները ձևավորվել են համաձայն 2011-2015թթ. երկարաժամկետ ռազմավարական ծրագրի: Ըստ դրա մշակվել են մասնաճյուղի զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման միջնաժամկետ և կարճաժամկետ պլանները: Միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրերը լուծում են երկարաժամկետ ռազմավարական ուղղություններում ընթացիկ աշխատանքների պլանավորման ու կոնկրետացման խնդիրները մոտակա երեք և մեկ տարիների համար (ԵՊՀ ԻՄ-Ի ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՊԼԱՆ, ԵՊՀ ԻՄ-Ի ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՊԼԱՆ):

Ամբիոնների միջնաժամկետ ռազմավարական ծրագրերը (օրինակ՝ «Պատմության և բա-դաբագիտության ամբիոնի 2013-2015թթ. զարգացման ռազմավարական ծրագիր») կազմվում են համաձայն ընդհանուր ռազմավարական ծրագրի: Յուրաքանչյուր ամբիոն կազմում է ամենամյա աշխատանքային ծրագրեր, ներկայացնում աշխատանքային պլան՝ նշելով գիտական կոնֆերանսների նախապատրաստման, ուսանողական գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման, գիտական բանավեճերի ու նոր լույս տեսած մասնագիտական գրականության շուրջ քննարկումների անցկացման մասին հստակ ժամանակացույց: Կատարված գիտական աշխատանքները ներկայացվում են ամբիոնների տարեվերջյան հաշվետվություններում և ամփոփվում ԵՊՀ ԻՄ տարեկան հաշվետվությունում:

Մասնաճյուղի յուրաքանչյուր դասախոս ուսումնական տարվա սկզբին կազմում է անհատական աշխատանքային պլան, ներկայացնում գիտական, գիտամանկավարժական և գիտամեթոդական հետազոտությունների, մասնագիտական աճի ապահովման, որակավորման բարձրացման ուղղությամբ իր կողմից պլանավորված աշխատանքները, իսկ ուստարվա ավարտին ներկայացնում կատարողականի վերաբերյալ համապատասխան հաշվետվություն:

Հետազոտական ոլորտում միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրերի իրականացմամբ վերջին երեք տարիներին ակտիվացել են ԵՊՀ ԻՄ-ի հետազոտական աշխատանքները, չափված գիտական հրատարակումների և դրանց վրա կատարված հղումների ցուցանիշով /Գաց 5 (2009-2014)/: Տարեցտարի գրադարանը համալրվում է մասնագիտական անհրաժեշտ գրականությամբ (*ԳԱՅ ցուցանիշ 4.4, 4.5*), ավելացել են գիտության համակարգի համար նախատեսված ինտեռնետային կապերի հաշվեկշիռը, ինչպես նաև հետազոտական աշխատանքներում օգտագործված համակարգիչների թիվը (*ԳԱՅ ցուցանիշ 5.5*): Մասնաճյուղի ղեկավարության կողմից մշակվել և գործում են հետազոտական աշխատանքների խրախուսամն մեխանիզմներ, մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմը ունի մայր բուհի գիտահետազոտական լաբորատորիաներից օգտվելու և գիտական պարբերականներում իրենց հոդվածները տպագրելու հնարավորություն: Նախատեսվում է ունենալ գիտահետազոտական աշխատանքները կոորդինացնող համապատասխան կառույց, որի առանցքային խնդիրները կլինեն այդ ոլորտում տարվող քաղաքականության մշակումը և իրականացումը, միջամբիոնային կապերի ամրապնդումը, լավագույն փորձի փոխանցումը, երիտասարդ գիտնականներին աջակցությունը, հետազոտական աշխատանքներում ներգրավված դասախոսների լրացուցիչ միջոցների տրամադրումը, ժամանակակից սարքավորումների ձեռքբերումը և այլն:

Չափորոշիչ գ. ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

Վերլուծենք մասնաճյուղում հետազոտությունների զարգացմանն ու նորարարություններին նպաստող քաղաքականության ու ընթացակարգերի արդյունավետությունը և արդիականությունը:

Մասնաճյուղի հետազոտական աշխատանքների քաղաքականությունն ու ընթացակարգերը բխում են ԵՊՀ և ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կանոնադրություններից և ամրագրված են ԵՊՀ կանոնակարգերում ու ծրագրային փաստաթղթերում /ՌԾ, Խնդիր II/: Դրանք միտված են ստեղծելու և զարգացնելու մասնաճյուղի գիտական ուղղությունները, արձագանքելու գիտության զարգացման միջազգային տենդենցներին՝ գիտական լաբորատորիաների ու կենտրոնների ստեղծման ճանապարհով: ՀՀ Կրթության և գիտության նախարարության, ԲՈՀ-ի կողմից սահմանված կանոնակարգերը ևս նպաստում են մասնաճյուղի հետազոտական աշխատանքների ակտիվացմանը՝ կարևորելով դասախոսների հետազոտական աշխատանքների արդյունքներն ու ձեռքբերումները գիտական աստիճաններ կամ կոչումներ շնորհելիս (թեկնածու, դոկտոր, դոցենտ, պրոֆեսոր և այլն):

Գիտական ներուժի արդյունավետությունը բարձրացնելու և հետազոտությունների ոլորտում ծավալի աճ ապահովելու համար՝ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը ձգտում է բարելավել հետազոտական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ տարածքային և նյութատեխնիկական պայմանները, զարգացնել և արդիականացնել մասնաճյուղի ուսումնական և գիտական լաբորատոր բազան աշխատակիցներին և ուսանողությանը տրամադրելով գիտակրթական անհրաժեշտ ռեսուրսներ: Ռազմավարական խնդրի իրականացման կարևոր ձեռքբերումներից է 2011թ. հիմնված «Ակունք» գիտական հոդվածների ժողովածուն, որն ընդգրկված լինելով ՀՀ ԲՈՀ-ի կողմից հաստատված «Ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակ»-ում, ապահովում է մասնաճյուղի, ինչպես նաև ՀՀ այլ բուհերի պրոֆեսորադասախոսական աշխատակազմի կողմից իրականացված գիտամեթոդական աշխատանքների հրապարակայնությունը, նպաստում գիտական մտքի զարգացմանը:

Աղյուսակ 4

Հեղինակ		2011		2012		2013		2014	
		Քանակ	%	Քանակ	%	Քանակ	%	Քանակ	%
1	ՀՀ այլ բուհերից հրավիրված դասախոսներ	11	21%	12	18%	10	12%	4	13%
2	Տեղացի դասախոսներ	27	51%	28	41%	18	21%	13	41%
3	Այլ հեղինակներ	15	28%	28	41%	57	67%	15	46%
Ընդամենը		***53***		***68***		***85***		***32***	

2011-2014թթ. ընթացքում «Ակունք» հանդեսում տպագրվել է 238 հոդված, որի 52%-ը՝ բուհի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից (*աղյուսակ 4*): Գիտական հանդեսի հրատարակման ծախսերը հիմնականում հոգում է մայր բուհը, թեև մասնաճյուղը նույնպես ունենում է իր ներդրումը՝ վճարելով հանդեսի հերթական համարի խմբագրման ու համակարգչային ձևավորման համար: Մեթոդական աշխատանքները խրախուսելու համար մասնաճյուղն ապահովում է դրանց անվճար հրատարակումը, կարևորում դասավանդողների գիտական ստաժավորումը գիտահետազոտական տարբեր կազմակերպություններում:

Հետազոտական աշխատանքների կատարմանը օժանդակում են այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են հետազոտական աշխատանքների ընդգրկումը դասախոսների հավելավճարների որոշման ցուցանիշներում, ինչպես նաև դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի կառուցվածքում: «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի աշխատակիցներին խրախուսելու կանոնակարգ»-ի համաձայն՝ հրատարակած մենագրության, հոդվածների, թեզերի, գիտական կոնֆերանսներին ունեցած մասնակցության, գիտական կոնֆերանսների ժողովածուներում զեկույցների թեզիսների հրատարակման, դոկտորական կամ

թեկնածուական ատենախոսության պաշտպանության, թեկնածուական մինիմումների քննության հանձման համար դասախոսները ստանում են սահմանված միավորներ (առավելագույնը 20):

2011-2015թթ. ընթացքում մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմը որպես խրախուսում ստացել է պարգևավճար ընդհանուր 6.080.000 /վեց միլիոն ութանասուն հազար/ դրամի չափով՝ գիտությանն ու կրթությանը մատուցած ծառայության և մասնագիտական արդյունավետ գործունեության համար (***աղյուսակ 5***):

Աղյուսակ 5

Դրամական խրախուսում ստացած դասախոսների թվի և դրամական չափի ամփոփում (2011-2015թթ.)												
N	Ֆակուլտետ/ ամբիոն	2011		2012		2013		2014		2015(հունիս)		Ընդհանուր դրամ. չափը /հազար/
		Խրախուսում ստացածների թիվը	Դրամական չափը հազար/	Խրախուսում ստացածների թիվը	Դրամական չափը հազար/	Խրախուսում ստացածների թիվը	Դրամական չափը /հազար/	Խրախուսում ստացածների թիվը	Դրամական չափը /հազար/	Խրախուսում ստացածների թիվը	Դրամական չափը /հազար/	
1	Բնական գիտությունների	3	110	11	280	14	500	14	365	7	160	***1415***
2	Հումանիտար գիտությունների	15	405	25	610	19	590	38	1055	12	340	***3000***
3	Տնտեսագիտության	4	80	9	190	9	290	12	280	3	60	***900***
4	Կիրառական արվեստի	1	20	8	190	3	60	9	305	3	70	***645***
5	Համամասնաճյուղա-յին ամբիոն			2	70	1	20			1	30	***120***
Ընդամենը		***23***	***615***	***55***	***1340***	***46***	***1460***	***73***	***2005***	***26***	***660***	***6080***

Մասնաճյուղը կարևորում է երիտասարդ դասավանդողների գիտական գործունեությունը: Վերջին հինգ տարիների ընթացքում թեկնածուական ատենախոսություններ են պաշտպանել մասնաճյուղի 14 երիտասարդ դասախոսներ (մինչև 35 տարեկան), որոնցից 4-ը արժանացել է բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի, 2-ը՝ պատմական գիտությունների թեկնածուի, 1-ը՝ հոգեբանական գիտությունների թեկնածուի, 2-ը՝ ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածուի, 1-ը՝ տեխնիկական գիտությունների թեկնածուի, 1-ը՝ կենսաբանական գիտությունների թեկնածուի: Համալսարանը կարևորում է նաև երիտասարդ գիտնականների ու ուսանողների ներգրավումը հետազոտական նախագծերում: 2012-2014թթ. Շվեցարիայի Ֆրայբուրգի համալսարանի կողմից մրցութային կարգով տրամադրված «Միգրացիայի և մարդկային կապիտալի վերարտադրության փոխառնչություններ ՀՀ-ում» (ASCN) դրամաշնորհային ծրագրի աշխատանքներում ընդգրկված են եղել նաև մասնաճյուղի տնտեսագիտության ֆակուլտետի 4 ուսանողներ:

Մասնաճյուղի երիտասարդ հետազոտողները և ուսանողները մասնակցում են մայր բուհի և այլ կազմակերպությունների կողմից պարբերաբար կազմակերպվող ամառային դպրոցներին և կոնֆերանսներին: Ուսանողության համար մասնաճյուղում կազմակերպվում են սեմինարներ՝ գիտահետազոտական աշխատանքների կատարման հիմնական սկզբունքներին ծանոթացնելու նպատակով: Տրամադրվում են մեթոդականներ, որտեղ ներկայացված են գիտական աշխատանք կատարելու, ինչպես նաև ռեֆերատներ, կուրսային և ավարտական աշխատանքներ գրելու համար անհրաժեշտ հիմնական տեղեկատվությունը:

Մասնաճյուղի բյուջեն հաստատվում, ձևավորվում և բաշխվում է ըստ ԵՊՀ ԻՄ հաշվապահության կանոնադրության (հաստատված է ԵՊՀ ԻՄ գիտխորհրդի 2006թ. դեկտեմբերի 25-

ի թիվ 6 նիստում): Դրանում գիտահետազոտական աշխատանքների իրականացման ֆինանսավորման համար հատուկ հոդված սահմանված չէ, սակայն մասնաճյուղը այդ ուղղությամբ որոշակի ծախսեր է կատարում հատկացնելով որոշակի գումարներ գիտաժողովների, կոնֆերանսների, կրթական բարեփոխումների, վերապատրաստումների մասնակցության համար գործուղումների կատարման, լաբորիատորիաների սարքավորումների ձեռքբերման և այլնի համար (***Աղյուսակ 6***):

Աղյուսակ 6

Գիտահետազոտական աշխատանքների համար նախատեսված ֆինանսներ						
Նպատակը	2012		2013		2014	
	գումարը	%	գումարը	%	գումարը	%
Կրթական բարեփոխումներ	500,0	0.14%	500,0	0.14%	3000,0	0.7%
Մասնագիտական կրթ. և որակի ապահովում	-	-	-	-	2500,0	0.6%
Լաբորատոր սարքավորումների ձեռքբերում	900,0	0.3%	900,0	0.2%	900,0	0.2%
Քիմիական և լաբորատոր նյութերի ձեռքբերում	500,0	0.14%	500,0	0.14%	300,0	0.1%

Հետազոտական աշխատանքներում ակադեմիական ազնվությունը երաշխավորելու և գրագողությունը կանխարգելելու համար հրապարակման նախապատրաստված նյութերը՝ գիտական հոդվածներ, գիտաժողովներում ներկայացվող զեկույցներ, թեզիսներ և այլն, քննարկվում են համապատասխան ամբիոններում: Մենագրությունները և ուսումնական ձեռնարկները քննարկվում են նաև ֆակուլտետների գիտական խորհուրդներում, ապա նոր միայն երաշխավորվում հրատարակչության: Անհրաժեշտության դեպքում դրանք գրախոսվում են նաև ԵՊՀ համապատասխան ամբիոններում, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի (ԳԱԱ) մասնագիտական կառույցների և այլ հետազոտական հաստատությունների հեղինակավոր մասնագետների կողմից: «Ակունք» գիտական հանդեսում հրատարակվող հոդվածների նկատմամբ կիրառվում են գիտական մակարդակի և հետազոտական բաղադրիչի բարձր պահանջներ: Հանդեսում տպագրվում են գրախոսված և խմբագրական խորհրդի կողմից երաշխավորված հոդվածները: Այն հնարավորինս բացառում է գրագողությունն ու նպաստում ակադեմիական ազնվությանն ու օբյեկտիվությանը: Հանդեսի խմբագրական խորհրդի կազմում ընդգրկված են մեկ տասնյակից ավել գիտական ճանաչում և վաստակ ունեցող գիտնականներ:

Չափորոշիչ դ. ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

Վերլուծենք մասնաճյուղի հետազոտական գործունեության միջազգայնացման քաղաքականության արդյունավետությունը և վերջին հինգ տարիների նվաճումները:

Մասնաճյուղը կարևորում է հետազոտական գործունեության միջզգայնացումը և որոշակի քայլեր ձեռնարկում համալսարանի հետազոտական արդյունքների միջազգայնացման ուղղությամբ: Թեև մասնաճյուղում դեռևս միջազգային հետազոտական նախաձեռնություններում ուսումնառողների և դասավանդողների ներգրավվածության աջակցման և խրախուսման կանոնակարգված բավարար մեխանիզմներ չեն գործում, այնուամենայնիվ ամբիոնների նախաձեռնությամբ մասնաճյուղի դասախոսները իրենց մասնակցությունն են ունենում ԵՊՀ-ի և ՀՀ

հանրապետության այլ բուհերի կողմից կազմակերպվող միջազգային գիտաժողովներին: 2011-2014թթ. ընթացքում մասնաճյուղի դասախոսները մասնակցել են մի շարք միջազգային գի-տաժողովների, զեկուցումներով հանդես եկել նաև արտերկրի միջազգային գիտաժողովներում (Ռուսաստան, Ուկրաինա, Վրաստան): Հետազոտությունների միջազգայնացմանը նպաստող կարևոր ձեռքբերումներից է 2014թ. «Հայաստանի տարածաշրջանները հօգուտ եվրասիական ինտեգրման» միջազգային համաժողովի կազմակերպումը ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում (***աղյուսակ 7, աղյուսակ 8***):

Աղյուսակ 7

Դասավանդողների մասնակցությունը ՀՀ-ում և արտերկրում կազմակերպվող միջազգային գիտաժողովներին						
N	Կազմակերպման վայրը	2011	2012	2013	2014	Ընդամենը
1	ՀՀ-ում կազմակերպված միջազգային գիտաժողովներ	2	5	8	6	*21*
2	Արտերկրում կազմակերպված միջազ-գային գիտաժողովներ	1	3	1	3	*8*
Ընդամենը		*3*	*8*	*9*	*9*	*29*

Աղյուսակ 8

Դասավանդողների մասնակցությունը միջազգային գիտաժողովներին ըստ գիտ. բնագավառների (2011-2015թթ.)													
N	Գիտ. բնագավառներ	2011		2012		2013		2014		2015		Ընդամենը	
		գիտաժողով	զեկուց	գիտաժողով	զեկուց	գիտաժողով	զեկուց	գիտաժողով	զեկուց	գիտաժողով	զեկուց	գիտաժողով	զեկուց
1	Բնագիտական	1	1	1	1	2	2	2	2	-		*6*	*6*
2	Հումանիտար	2	2	6	7	7	8	7	10	1	1	*23*	*28*
3	Տնտեսագիտական	-		-		1	1	-		-		*1*	*1*
Ընդամենը		*3*	*3*	*7*	*8*	*10*	*11*	*9*	*12*	*1*	*1*	*30*	*35*

2014թ. մայիսին մասնաճյուղի ուսանողները մասնակցել են «WRITE ON! COMPETITION 2014» միջազգային մրցույթին (12 պետությունների մասնակցությամբ), որի ազգային փուլում մասնաճյուղի 3 ուսանողուհիներ գրավել են 1-ին և 2-րդ տեղերը:

2011-2015թթ. ընթացքում ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում և արտասահմանյան միջազգային գիտական հանդեսներում մասնաճյուղի դասախոսների կողմից հրատարակվել են գիտական հոդվածներ (***աղյուսակ 9***):

Աղյուսակ 9

ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկ						
N	**Ամսագիրը (երկիրը)**	**2011**	**2012**	**2013**	**2014**	**2015** (հունիս)
1	"Проблемы экономики" Москва, (Россия)	1	-	-	-	-
2	"Московское научное обозрение " (Россия)	-	1	-	-	-
3	“Известия Аграрной Науки” Тбилиси (Грузия)		1			
4	"Political Transformation and Social change in the Sound Caucasus" (Georgia)	-	-	1	-	-
5	"Peculiarities of migration risks in armenniaas they relateto	-	-	1	-	-

	human capital reproduction" (Georgia)					
6	"Научный журнал" Москва (Россия)	-	-	-	1	-
7	Журнал издательство СГУ “Право и образование” (Россия)				4	
8	Геополотика и экогеодинамика регионов, Симферополь (Россия)				1	
9	Современные наукоемкие технологии, Пенза, Россия				1	
10	Сборник научных статей, Минск (Белорусия)					1
11	Международный журнал прикладных и фундаментальных исследованый, Москва (Россия)					1
Ընդամենը		***1***	***2***	***2***	***7***	***2***

Օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկ						
N	**Ամսագիրը (երկիրը)**	**2011**	**2012**	**2013**	**2014**	**2015** (հունիս)
1	"Research report" /LiTH-MAT-R/ (Sweden)	1	-	-	-	-
	"Перспективные вопросы мировой науки" (Болгария)		1			
5	"International journal of Siology, Pharmacy and Allied Sciences" /IJBPAS/ (Iran)	-	-	-	-	1
7	"Open journal of Discrete Mathematics"	-	-	1	-	-
8	International Journal of Modern Physics		1			
9	Journal of Physics	-	1	1	-	-
	GISAP: Physics, Mathematics and Chemistry				1	
Ընդամենը		***1***	***3***	***2***	***1***	***1***

Արտասահմանյան երկրների գիտական հանդեսներում մասնաճյուղի դասավանդողների հրատարակած գիտական աշխատանքների թիվը 2011-2014թթ. կազմել է ընդհանուր հրատարակությունների (285) թվի 7.7% -ը: Ներկայացված վերլուծությունը ցույց է տալիս, որ դեռևս սահմանափակ է ԱՊՀ և օտարերկրյա գրախոսվող ամսագրերում հրապարակումների թիվը, սակայն ներկայացված ցանկն ամբողջությամբ չի արտացոլում իրական պատկերը, քանի որ հոդվածների զգալի մասը լույս է տեսել գիտաժողովներիի նյութերի տեսքով: Այդուհանդերձ, հարկավոր է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել ԱՊՀ և միջազգային գրախոսվող ամսագրերում գիտական հրապարակումներն ընդլայնելու ուղղությամբ:

Մասնաճյուղը կարևորում է նաև մասնակցությունը միջազգային գիտական և գիտատեխնիկական նախագծերին ու դրամաշնորհներին, ուսումնառողներին և դասավանդողներին աջակցում տրամադրելով անհրաժեշտ տեղեկատվություն միջազգային դրամաշնորհային ծրագրերի և գիտական նախագծերի մասնակցության վերաբերյալ, օժանդակում դրանց հայտադիմումների ձևակերպմանը: Մասնաճյուղի դասախոսները թեև քիչ թվաքանակով (հիմնականում ԵՊՀ-ից հրավիրված) 2011-2014թթ. ընդգրկվել են արտասահմանյան երեք դրամաշնորհային ծրագրերում (Միգրացիայի և մարդկային կապիտալի վերարտադրության փոխառնչությունները ՀՀ-ում (ASCN), Երևանի բնակելի թաղամասերում բնակության միջավայրի վիճակի ուսումնասիրություն (11210038), Զբոսաշրջության կայուն կառավարման ոլորտում մագիստրոսական միջազգային առարկայական ծրագրերի և ուսումնական պլանների կազմում (530561, Tempus 1-2012-1-DE)): Դրանք տրամադրված են եղել Շվեցարիայի Ֆրայբուրգի համալսարանի կողմից, միջազգային վիշեգրադյան հիմնադրամով Հունգարիայի

գիտությունների ակադեմիայի աշխարհագրական հետազոտությունների ինստիտուտի կողմից և Եվրամիության «TEMPUS» ծրագրի և Յադեի համալսարանի կողմից (Գերմանիա) :

Թեև միջազգային հետազոտական նախագծերում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսումնառողների և դասավանդողների ներգրավվածությունը խթանելու ուղղությամբ կատարվում են որոշակի աշխատանքներ, այնուամենայնիվ մասնաճյուղի միջազգային գիտահետազոտական գործունեությունը դեռևս ակտիվացման կարիք ունի: Դրա համար մասնաճյուղը նախատեսում է մայր բուհի աջակցությամբ օգտվել ԵՊՀ միջազգային համագործակցության վարչության ծառայություններից, իսկ 2015թ. սեպտեմբերի 10-ին կայացաց ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի թիվ 11 նիստի որոշմամբ ԵՊՀ ԻՄ–ի կազմում ստեղվել է «Միջազգային կապերի բաժին»-ը: Դասախոսական կազմի գիտական գործունեությանը նպաստելու և լեզվական խոչընդոտը հաղթահարելու համար մասնաճյուղը դասախոսական կազմի համար կազմակերպում է օտար լեզվի անվճար ուսուցում և օժանդակում միջազգային համագործակցությունների արդյունքում ձեռքբերած գրականությամբ:

Չափորոշիչ է. ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

Պատասխանել հետևյալ հարցերին:	%
Ուսումնառողների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացներից:	91,11%
Դասավանդողների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացներից:	78%
Գործատուների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացներից:	78,63%

Վերլուծենք մասնաճյուղում գործող հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմների արդյունավետությունը:

Լինելով հանրապետության գիտակրթական խոշորագույն հաստատության մասնաճյուղը, կրթօջախը կարևորում է ուսումնական գործընթացների փոխկապակցումը հետազոտական գործունեությանը /ՌԾ, Խնդիր II/: Դասավանդվող առարկաների բաշխումը կատարվում է համաձայն դասավանդողների նեղ մասնագիտացման, հաշվի առնվում նրանց հակումներն ու կարողությունները, ուսանողների կուրսային և ավարտական թեմաները առաջադրվում են հիմնականում ամբիոնների գիտական ուղղվածությանը և գիտական ղեկավարների հետազոտական աշխատանքների թեմատիկային համապատասխան: Առաջնորդվելով գիտություն և կրթություն ինտեգրման, հարատև փոխհարստացման սկզբունքներով՝ մասնաճյուղի դասախոսները իրենց գիտական աշխատանքների արդյունքները և փորձը ներառում են ԵՊՀ ԻՄ մասնագիտական կրթական ծրագրերում, ըստ նպատակահարմարության կատարում առարկայական դասընթացների կրթական ծրագրերի բովանդակային փոփոխություններ: Ամբիոնների կողմից կատարվող գիտահետազոտական աշխատանքները մեծապես նպաստում են ինչպես ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը, այնպես էլ ժամանակի նորարական փոփոխություններին պատշաճ արձագանքելու կարողությունների մեծացման ու տարածաշրջանի հիմնախնդիրներին ուղղված առաջարկությունների մշակմանը: Դասավանդողներն ուսանողներին իրենց կատարած հետազոտական արդյունքներին հաղորդակից են դարձնում ոչ միայն դասավանդվող առարկաների, առանձին թեմատիկ դասախոսությունների միջոցով կամ ինքնուրույն, կուրսային ու ավարտական աշխատանքների համար հանձնարարվող գրականությամբ այլև վերջիններիս ներառում են հետազոտական աշխատանքներում՝ փոխհարստացնելով ու ամբողջացնելով այն պրակտիկաների միջոցով:

Ուսանողների գիտելիքների յուրացման և հետազոտական հմտությունների կիրառման ուղիներից է նաև ուսանողական գիտական ընկերության և ուսանողական խորհրդի կողմից կազմակերպվող գիտաժողովների, սեմինարների մասնակցությունը: 2011-2014թթ. ժամանակահատվածում մասնաճյուղի ուսանողների կողմից կարդացվել են շուրջ 55 ուսումնագիտական զեկույցներ: Դրանց պատրաստումը կատարվել է ամբիոնների խորհրդատվությամբ և աջակցությամբ: Ուսանողների լավագույն հետազոտական աշխատանքները տպագրվում են ԵՊՀ գիտական հանդեսներում: 2013թ. փետրվարին Հայաստանի երիտասարդական հիմնադրամի և Վիվա-Սել-ՄՏՍ-ի հովանավորությամբ ՀՀ կրթության և գիտության նախարարության կազմակերպած «Լավագույն ուսանող» հանրապետական մրցույթում «Գիտահետազոտական աշխատանք» անվանակարգում հաղթող են ճանաչվել (1-ին և 2-րդ տեղեր) մասնաճյուղի «Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա» և «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտությունների 4-րդ կուրսի ուսանողները:

Չափանիշ 6-ի վերաբերյալ ներկայացնել SWOT վերլուծություն 5 տարիների համար:

Ուժեղ կողմեր (Strengths)	Հնարավորություններ (Opportunities)
2. Մասնաճյուղի առկայությունը՝ որպես տարածաշրջանային հետազոտական և կրթական կարևոր կենտրոն: 3. Ռազմավարական ծրագրում հետազոտություններին և զարգացմանը վերաբերող նպատակի առկայությունը: 4. Գիտական հետազոտությունների ոլորտում բազմամյա փորձ կուտակած բարձրորակ պրոֆեսորադասախոսական անձնակազմ: 5. Ձևավորված հետազոտական միջավայր՝ երիտասարդ գիտնականների և ուսանողների պատշաճ ներգրավմամբ: 6. Ամբիոններում գիտահետազոտական գերակա ուղղությունների առկայությունը 7. «Ակունք» գիտական հանդեսի առկայությունը: 8. ԵՊՀ-ի գիտական հանդեսներում մասնաճյուղի աշխատակիցների գիտական հոդվածների տպագրումը: 9. Տարաբնույթ գիտական միջոցառումների կազմակերպումը: 10. Մասնաճյուղի ուսանողների և դասավանդողների ակտիվ մասնակցությունը տարածաշրջանային և հանրապետական ցուցահանդեսներին: 11. ՈԻԳԸ-ի ակտիվ գործունեությունը:	1. ԵՊՀ գիտահետազոտական լաբորատորիաներից օգտվելը: 2. Հանրապետական և միջազգային գիտաժողովներին մասնակցության ընդլայնումը և «Հետազոտական աշխատանքի կազմակերպման սկզբունքները» դասընթացի կազմակերպումը մասնաճյուղում: 3. ԵՊՀ միջազգային համագործակցության վարչության հետ համագործակցությունը: 4. Գիտատեղեկատվական ներհամալսարանական ցանցի կատարելագործում: 5. Հանրապետական և տարածաշրջանային հետազոտական ծրագրերում համալսարանի մասնակցության նախաձեռնում: 6. Արտաքին շահառուների, մասնավորապես պայմանագրերով ամրագրված խոշոր գործատուների և հասարակության հետ կապերի կատարելագործում:
Թույլ կողմեր (Weaknesses)	**Վտանգներ (Threats)**
1. «Ակունք» գիտական հոդվածների ժողովածուի հրատարակման թույլ հաճախականությունը: 2. Գիտական և հետազոտական աշխատանքների,	1. ՀՀ գիտահետազոտական կազմակերպությունների համագործակցության բացակայութ-

գիտաժողովների մասնակցության, գիտական հոդվածների տպագրման ֆինանսական թույլ աջակցությունը: 3. Պետական ֆինասնավորմամբ գիտական թեմաների բացակայությունը: 4. Գիտական հետազոտության համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի բացակայությունը: 5. Հետազոտական աշխատանքներում ուսանողների թույլ ներգրավվածությունը 6. Համալսարանի գիտական ներուժի ոչ բավարար ներգրավվածություն պետական պատվերով և նպատակային ֆինանսավորմամբ իրականացվող գիտական հետազոտություններում: 7. Բարձր վարկանիշով հանդեսներում տպագրված աշխատանքների քիչ քանակը: 8. Օտար լեզվի, մասնավորապես միջազգային գիտական լեզվի՝ անգլերենի տիրապետման անբավարար մակարդակը: 9. Փոխկապակցված գիտահետազոտական նախաձեռնություններ իրականացնելու նպատակով այլ համալսարանների հետ գործընկերային հարաբերությունների ցածր մակարդակը:	յունը: 2. Պետության կողմից գիտական թեմաների ոչ բավարար ֆինանսավորումը: 3. Տարածաշրջանում գիտահետազոտական կազմակերպությունների և գիտահետազոտական պատվերների բացակայությունը: 4. Համաշխարհային տեխնոլոգիական առաջընթացին ոչ համահունչ զարգացումը:

Հավելված 1

ԱՄԲԻՈՆՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2011-2015թթ.

	Ամբիոն	Հետազոտական ուղղությունները
1	Հայոց լեզվի և գրականության	Բարբառագիտություն, ոճագիտություն, գրաբար, լեզվաբանություն, բանահյուսություն, հայ գրականություն (հին և միջնադարյան, նոր, նորագույն շրջաններ)
2	Օտար լեզուների	Դարձվածաբանություն, ոճաբանություն, բառագիտություն, գրական թարգմանություններ
3	Հայոց պատմության և հասարակագիտության	Ազգագրություն, հայոց պատմություն (հին, միջնադարյան, նոր, նորագույն շրջաններ)
4	Մանկավարժության և հոգեբանության	Իրավաբանական մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրները: Անձի հոգեբանական անվտանգության հիմնախնդիրները
5	Ընդհանուր տնտեսագիտության	Միգրացիայի և մարդկային կապիտալի վերարտադրության փոխառնչությունները ՀՀ-ում, տնտեսագիտական մտքի պատմության հիմնահարցեր
6	Տուրիզմի կառավարման և մշակութաբանության	Տավուշի մարզի զբոսաշրջային ներուժի ուսումնասիրություն և գնահատում
7	Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների	Գրաֆների կողային ներկումներ, ծրագրավորման լեզուներ, ալգորիթմներ և տվյալների կառուցվածքներ

8	Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության	Կոմպլեքս և ֆունկցիոնալ անալիզ, մակերեսով ինտեգրելի ֆունկցիաների դասերի վրա գործող գծային անընդհատ օպերատորներ
9	Գծանկարի, գունանկարի և քանդակի	Մանրանկարչություն, խեցեգործություն
10	Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի	Հայկական կարպետներ, գոբելեն, վիտրաժ

Հավելված 2

ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ ԵՎ ԴՈԿՏՈՐԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (2011-2015թթ.)

N	Անուն, ազգանուն, հայրանուն	Ծնն. օր, ամիս, տարի	Թեկնածուական/դոկտորական ատենախոսության թեմա	Տարեթիվ	Գիտական աստիճան
1	Սարուխանյան Մուշեղ Լևոնի	01.01.1974	Գուրգեն Մահարու «Այրվող այգեստաններ»» վեպը քննադատության գնահատմամբ	2011թ.	բան.գ.թ.
2	Խառատյան Տիգրան Գագիկի	17.04.1984	Ընդհանուր և կիրառական լեզվաբանություն, Գերմանական լեզուներ	2011թ.	բան.գ.թ.
3	Պողոսյան Կարինե Պողոսի	08.06.1976	Փավստոս Բուզանդի «Պատմութիւն Հայոց»» երկի լեզուն (բառապաշարային և քերականական իրողություններ)	2012թ.	բան.գ.թ.
4	Մկրտչյան Գարիկ Գվիդոնի	03.10.1983	Ապարանի տարածաշրջանի բարբառային և խոսվածքային տարբերակների քննություն	2012թ.	բան.գ.թ.
5	Մակարյան Հայկ Անուշավանի	26.12.1985	ՀՀ հարկային քաղաքականության կատարելագործման ուղիները ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում	2012թ.	տնտ.գ.թ.
6	Մարզպանյան Հարություն Ալեքսանի	12.04.1955	Տնտեսական զարգացման հումանիզացումը. պատմական միտումը և ժամանակակից խնդիրները	2012թ.	**տնտ.գ.դ.**
7	Վանյան Հասմիկ Սամվելի	16.09.1987	Ավետիք Իսահակյանի չափածո և արձակ լեգենդները	2013թ.	բան.գ.թ.
8	Մովսեսյան Հովսեփ Իսրայելի	04.10.1969	Սոցիալ-քաղաքական ցանցերի դերը ՀՀ-ում ազգային անվտանգության քաղաքականության կառուցվածքում	2013թ.	քաղ.գ.թ.
9	Գրիգորյան Վահագն Վարազդատի	11.11.1961	Մանկավարժական կոլեկտիվի և համայնքի համագործակցության կազմակերպման ձևերը դպրոցում	2013թ.	մանկ.գ.թ.
10	Սարգսյան Դիանա Յուրիկի	01.11.1982	Անձի անվտանգության հոգեբանական գործոնների դերը կենսագործունեության տարբեր պայմաններում (տեսողության խնդիրներով դեռահասների օրինակով)	2013թ.	հոգ.գ.թ.
11	Բեջանյան Արմեն Տիգրանի	03.05.1957	Կոնֆլիկտների առանձնահատկությունները մանր և միջին բիզնեսում	2013թ.	հոգ.գ.թ.

12	Սիմոնյան Աննա Սմբատի	01.08.1981	Մուր-Պենրոուզի պարամետրական ընդհանրացված հակադարձ մատրիցների որոշման թվանալիտիկ եղանակների մշակումը և հաշվողական գործընթացների ավտոմատացումը	2013թ.	տեխ.գ.թ.
13	Հարությունյան Մարտին Վարդանի	05.02.1982	Բեմական նորագույն տեխնոլոգիաների հնարավոր կիրառումը Հայաստանի դիտադահլիճային շինությունների ռեկոնստրուկցիաներում	2013թ.	արվեստ. գ.թ.
14	Ալեքսանյան Գոռ Փարսադանի	13.07.1987	Հայաստանի հանրապետության տարածքի օգտագործման էկոլոգիական առանձնահատկությունները և հետևանքները (աշխարհագրական ասպեկտ)	2013թ.	աշխ.գ.թ.
15	Աղաբաբյան Վահան Արշակի	08.12.1982	Սերո Խանզադյանի պատմվածքներն ու վիպակները	2014թ.	բան.գ.թ.
16	Գասպարյան Նարինե Ալբերտի	04.08.1965	Խրախուսանքի արտահայտման միջոցները անգլերենում	2014թ.	բան.գ.թ.
17	Գրիգորյան Նաթելլա Սերոժի	20.06.1985	1921թ. փետրվարյան ապստամբությունը Հայաստանում	2014թ.	պատմ.գ.թ.
18	Մարգարյան Ալեքսան Շամիլի	31.08.1970	Ցածր ինտենսիվության միլիմետրային էլեկտրամագնիսական ալիքներով ճառագայթված ԴՆԹ-ի հետ որոշ ցածրամոլեկուլային միացությունների կոմպլեքսների ուսումնասիրությունը	2014թ.	ֆ.մ.գ.թ.
19	Քամալյան Հայկ Արթուրի	07.07.1988	$\mathcal{A}$-արժեքանի անալիտիկ ֆունկցիաների որոշ սպեկտրալ հատկությունների մասին	2014թ.	ֆ.մ.գ.թ.
20	Խաչատրյան Սոնա Ժիրայրի	24.07.1983	Աղստև գետի և նրա ջրահավաք ավազանի էկոլոգիական բնութագիրը	2014թ.	կեն.գ.թ.
21	Հարությունյան Լիաննա Միխայիլի	10.03.1955	Ընտանիքում արդյունավետ դաստիարակության կազմակերպման մանկավարժական պայմանները	2014թ.	մանկ.գ.թ.
22	Բեգինյան Լիաննա Գրիշայի	06.11.1980	Հուղարկավորության և հիշատակի ծեսերն ու սովորույթները Տավուշի մարզում. ավանդույթներ և նորույթներ	2015թ.	պատմ.գ.թ.
23	Հովհաննիսյան Արա Էդուարդի	24.10.1977	Հայ-սիրիական հարաբերությունները 1991-2011թթ.	2015	պատմ.գ.թ.
24	Պոտոսյան Ակսել Հարությունի	27.08.1958	ՀՀ որպես լեռնային երկրի գյուղական տարաբնակեցման աշխարհագրական հետազոտության հիմնախնդիրները	2015թ.	աշխ.գ.թ.
25	Հովսեփյան Կարեն Հայկի	04.01.1989	C*-алгебры порожденные инверсными подполугруппами бициклической полугруппы	2015թ.	ֆ.մ.գ.թ.
26	Այդինյան Անժելա Ժորայի	13.04.1970	Հայաստանի ռուսալեզու մամուլի լեզվական առանձնահատկությունների վերլուծություն	2015թ.	բան.գ.թ.

27	Դավթյան Նարինե Նվերի	11.06.1982	Որոշ դասերի գրաֆների ճիշտ կողային ներկումների բազմության մեջ միջակայքային սպեկտրով գագաթների թվի էքստրեմալ արժեքների մասին	2015թ.	ֆ.մ.գ.թ.
28	Սարգսյան Լևոն Կարոյի	12.08.1985	Ինքնավերաբերմունքի դերը դատապարտյալների հարմարման գործընթացում	2015թ.	հոգ.գ.թ.

- Երիտասարդ դասախոսներ (մինչև 35 տարեկան- 16)